

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԼԱԳՎԵՐԴՅԱՆ ՍԻԼՎԱ ՀԵՆՐԻԿԻ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՎ
ՋԱԼԱԼ ԷՂԴԻՆ ՌՈՒՄԻԻ «ՄԱՍՆԱՎԻ ՄԱՆԱՎԻ» ԳՐՔԵՐԻ
ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժ. 01. 01 - «Հայ դասական գրականություն» և ժ. 01. 07 - «Արտասահմանյան
գրականություն» մասնագիտություններով բանասիրական
գիտությունների թեկնածուի զիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավարներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԿՈՋՄՈՅԱՆ ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՋՄՈՅԻ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԶԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ՂՈՒՈՒՄՅԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ ԳՈՐԻԳԵՆԻ

բանասիրական գիտությունների թեկնածու
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԻԿ ԳԱԳԻԿԻ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ


Պաշտպանությունը կայանալու է 2011թ. հունիսի 8-ին՝ ժամը 13³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ. մայիսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

 Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է հայ և պարսիկ միաստիկ բանաստեղծների՝ Գրիգոր Նարեկացու և Ջալալ Էդրին Ռումիի պոեզիայի համեմատական քննությանը: Հեղինակներ, որոնց ստեղծագործությունները դարեր շարունակ եղել են գրականագետների հետաքրքրության առարկան: Հայ, պարսիկ, ինչպես նաև բազմաթիվ այլազգի հետազոտողներ զբաղվել են Նարեկացու և Ռումիի ստեղծագործությունների ուսումնասիրությամբ, վերլուծել են նրանց բազմախորհուրդ և այսօր էլ արդիական ու շատ հարցերում մեզ համար առեղծվածային ու բարդ պոեզիան: Արտահայտվել են նոր մտքեր, երբեմն՝ իրարամերժ կարծիքներ, բայց այդ ամենով հանդերձ՝ մինչ օրս էլ անվերժանելի ու չլուծված բազմաթիվ հարցեր են մնացել, որոնք խոսում են նրանց պոեզիայի խորության, արվեստի բարդ դրսևորումների և մեր ընկալումների ու ոչ համարժեք մոտեցումների մասին:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱՎԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իրականացված աշխատանքի արդիականությունը պայմանավորվում է մի քանի հանգամանքներով. նախ՝ մեր կողմից ուսումնասիրվող երկու աշխարհահռչակ հեղինակները՝ Գրիգոր Նարեկացին և Ջալալ Էդրին Ռումին, լինելով երկու հարևան պետությունների՝ Հայաստանի և Իրանի տաղանդաշատ միաստիկ բանաստեղծները, իրենց ժամանակներում անդրադարձել են այնպիսի հիմնախնդիրների ու բարոյահոգեբանական հարցերի, որոնք միշտ եղել են ու չեն դադարի մնալ ժամանակակից, քանի որ մարդկային արժեքներին վերաբերող խնդիրները, մարդու հոգեկերտվածքը բացահայտող խոհափիլիսոփայական տարրերն ու կրոնաբարոյական դրույթները երբևէ չեն կարող դուրս մնալ մարդկային կյանքից: Ավելին, դրանք չեն դադարում մարդու կյանքի անբաժան մասնիկը լինելուց: Առավել ընդարձակ՝ հոգևոր և բարոյական արժեքների կտրվածքով խնդիրը դիտարկելիս անվերապահ կարելի է ասել, որ դրա առաջնության կարիքը միշտ և ամենուրեք է զգացվում, և այն անխուսափելիորեն ուղեկցել է մարդկությանը թե՛ տասնյակ դարեր առաջ, թե՛ այսօր, երբ աշխարհիկ կյանքի հորձանուտներում տառապող մարդը ասես ավելի ու ավելի է հեռացել իր հոգևոր սկզբից:

Ինչ վերաբերում է ժամանակակից մշակութային, քաղաքական և սոցիալական իրադարձություններին, դժվար չէ նկատել նաև, որ երկու հարևան երկրների բարեկամական փոխհարաբերությունների տեսակետից ևս արդիական են դառնում նաև մշակութային, այդ թվում և գրականության ասպարեզում իրականացված բոլոր տեսակի գիտահետազոտական աշխատանքները, քանի որ յուրաքանչյուր ազգի գրականության մեջ արտացոլվում է և՛ նրա անցյալն ու պատմությունը, և՛ հոգեբանական ու խոհափիլիսոփայական կառուցվածքը, և՛ ազգային նկարագիրն ու ճակատագիրը: Ուստի հեռավոր դարերի խորքերից եկող գրական արժեքների վերհանումն ու ուսումնասիրությունը կարող է լինել երկու հարևան պետությունների ու ժողովուրդների միմյանց ճանաչելու լավագույն միջոցներից մեկը:

Լեզունը դարձած այս երկու հեղինակների գլուխգործոցներին դիմելով՝ փորձ է արվել մուտք գործելու նրանցից յուրաքանչյուրի գեղարվեստական ու փիլիսոփայական մտածողության խորքերը, վեր հանելու այնպիսի ընդ-

հանրություններն ու տարբերություններ, որոնց թե՛ հայ և թե՛ պարսից գրականագիտությունը ցայսօր չէր անդրադարձել:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան հայ և պարսիկ միստիկ երկու բանաստեղծների՝ Գրիգոր Նարեկացու և Ջալալ Էդդին Ռումիի «Մատեան ողբերգութեան» ու «Մասնավիե Մանավի» գլուխգործոց երկերի համեմատական քննությունն է:

Ատենախոսության նպատակն է ցույց տալ հոգեբանական, խոհափիլիսոփայական ու գաղափարական այն բազմաթիվ ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք ընկած են երկու բանաստեղծների հայացքների ու աշխարհընկալումների հիմքում: Ներկայացված ու լուսաբանված կարևոր և առանցքային խնդիրներից յուրաքանչյուրը հիմնավորվել է ուսումնասիրվող երկերից համապատասխան օրինակներով ու մեջբերումներով:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Խնդրո առարկա ունենալով երկու բանաստեղծների պոեզիայի համեմատական քննությունը՝ սույն աշխատանքն իրականացնելիս օգտակար և արժեքավոր նյութ ենք քաղել հատկապես փիլիսոփայական ու գրականագիտական այն երկերից, որոնցում ուսումնասիրվել են միստիկան, սուֆիզմը, դրանց համեմատությունը, ինչպես նաև սուրբգրային ակունքների գերակայությունն ու դրսևորումները միստիկական ստեղծագործությունների մեջ: Չնայած մի շարք հայ և պարսիկ գրականագետներ զբաղվել են այս երկու հեղինակների աշխարհայացքի և ստեղծագործական աշխարհի համեմատության աշխատանքով, սակայն սա առաջին փորձն է, որտեղ հանգամանորեն համեմատվում են նրանց երկու նշանավոր գրքերը՝ «Մատեանն» ու «Մասնավիե»: Ընդ որում, համեմատության այս փորձը իրականացվել է ոչ միայն առկա ընդհանրություններն ու շփման եզրերն ընդգծելու, այլև որոշակի տարբերություններն էլ ցույց դնելու նպատակով:

Տվյալ աշխատությունը կարևոր նշանակություն ունի հատկապես հայ-իրանական մշակութային առնչակցության և գրականագիտական ուսումնասիրությունների իրականացման տեսնակյունից: Քննարկման ենթակա միստիկ երկու բանաստեղծներից յուրաքանչյուրը դավանում է սեփական հավատքը, սակայն նրանք երկուսն էլ փորձում են գտնել ճշմարտությունը Աստծու մեջ, որոնել այն ուղիները, որոնք նրանց տանում են դեպի Կատարյալը:

Այսպիսով, լինելով իրարից երեք դար հեռու, լիովին տարբեր աշխարհներում՝ նրանք երկուսն էլ այս յուրահատուկ միստիկական տրամաբանության ու գաղափարախոսության կրողներն ու արտահայտողներն են եղել, մարդու և Աստծու փոխադարձ կապի երզիչները: Երկուսն էլ հաստատել, երգել ու ջատագովել են միևնույն գաղափարը՝ Աստծու կատարելությունը, և մեղավոր մարդու փրկությունը տեսել միայն ինքնակատարելագործման մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՔԸ

Գրիգոր Նարեկացու և Ռումիի ստեղծագործությունները՝ «Մատեանն» ու «Մասնավիե» համեմատելիս հիմնվել ենք երկու հեղինակներին նվիրված մեծագործությունների, ինչպես նաև տվյալ համեմատության դաշտում մինչ այդ իրականացված (Ա. Կոզմոյան¹, Ա. Սաֆարյան², Ա. Մաթյան³) աշխատանքների վրա: Ուսումնասիրության հիմնախնդիրներից ելնելով՝ օգտագործել ենք նաև կրոնագիտության, սուֆիզմիտության, աղբյուրագիտության և տիպաբանական համադրության մեթոդաբանական սկզբունքները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության և արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնների համատեղ նիստում: Արված դիտողությունները, տարբեր ցանկություններն ու նկատառումները հաշվի են առնվել, շտկվել ու լրացվել են ատենախոսության վերջնական տարբերակում:

Աշխատության որոշ դրույթներ և առանձին հարցեր հեղինակի կողմից քննության են առնվել «Կանթեղ», «Գարուն» և «Մերձավոր արևելք» պարբերականներում ու ժողովածուներում հրատարակված հոդվածներում, ինչպես նաև Իրանում և Չայաստանում տեղի ունեցած միջազգային գիտաժողովներին ներկայացված զեկուցումներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի ընտրությունն ու նպատակը: Ուսումնասիրության թեման հարյուրամյակներ ի վեր կողք կողքի ապրած, միմյանց մշակույթին, լեզվին, գրականությանը քաջածանոթ, միմյանց վարք

¹ Կոզմոյան Ա., Չայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան, Ե., 1997:

Տե՛ս նաև՝ Պարսից պոեզիայի ընտրանի, Ս. Կապուտիկյանի թարգմանությամբ, տողացի թարգմանեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Արմանուշ Կոզմոյանը, Ե., 2004:

² Սաֆարյան Ա., Գրիգոր Նարեկացին և սուֆիզմը, Իրան-նամե, Ե., 1993, No 1, էջ 28: Տե՛ս նաև՝ Ի վկայություն Նարեկացու աստվածաբանական ռեալիզմի, Երևանի համալսարան, Գիտաինֆորմացիոն հանդես, ԵՊՀ, թիվ 3(74), 1992, Գրիգոր Նարեկացու ու սուֆի բանաստեղծների ստեղծագործություններում ավանդական պատկերների աղասարակացման մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 73 ԳԱԱ, 1993, թիվ 2:

³ Մաթյան Ա., Գրիգոր Նարեկացու Մատեանը և իրանական միստիկ գրականությունը, «Հասկ» հայագիտական տարեգիրք, էջ 83-99:

ու բարքից և կենցաղից խորապես ազդված ու նաև սերտորեն կապված հարևան երկուերկրորդների՝ Իրանի ու Հայաստանի գրականության պատմության որոշակի մի հատվածն է, որի տեսադաշտում համեմատության նյութ են դարձել հայ և պարսից միաստիկ երկու բանաստեղծների՝ Գրիգոր Նարեկացու և Ջալալ Էդրիմ Բուսնի պոեզիան: Այստեղ տեսնում ենք հայացքների, աշխարհըմկալման, խոհափիլիսոփայական ու գաղափարական ընդհանրություններ ու շփման եզրեր, ինչպես նաև բազմաթիվ տարբերություններ:

Ատենախոսության մեջ փորձ է արվել հնարավորինս լիակատար ներկայացնել ուսումնասիրվող հարցերի ամբողջական պատկերը:

Աշխատանքն իրականացնելիս սկզբնաղբյուր են ծառայել Ա. Կոզմյանի, Յ. Գ. Թամրազյանի, Ա. Զառինքուբի, Բ. Զամանիի և այլոց կատարած ուսումնասիրությունները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵՎ ՋԱԼԱԼ ԷԴՐԻՄ ՈՒՄԻ

Աշխատանքի առաջին գլխում ներկայացվել են երկու բանաստեղծների ապրած ժամանակաշրջանները, նրանց կենսագրություններն ու ստեղծագործական մտածողությունը, որոնց տիպաբանությունը չափազանց կարևոր է երկու հեղինակների երկերի ընդհանրություններն ու տարբերությունները հստակեցնելու համար: Գլուխը բաղկացած է վեց ենթագլուխներից՝

1. «Նարեկացին և Բուսնի իրենց ժամանակի համատեքստում».
2. «Նարեկացու միաստիցիզմի դրսևորման տարրերը «Մատենան ողբերգության» երկում».
3. «Սուֆիզմն ու նրա էությունը».
4. «Նարեկացու և Բուսնի ստեղծագործական ժառանգությունը».
5. «Նարեկացու «Մատենանի» և Բուսնի «Մասնավի» ստեղծման փուլերն ու նրանց կառուցվածքը».
6. «Նարեկացին և Բուսնի ժողովրդի գիտակցության մեջ՝ ավանդապատումներում»:

Մանրամասն ներկայացվել են Հայաստանի 9-10-րդ և Իրանի 11-12-դարերը, որոնցում ապրել ու ստեղծագործել են մեր կողմից ուսումնասիրվող հեղինակները: Երկու դեպքում էլ քաղաքական, սոցիալական ու մշակութային ծաղկուն ժամանակաշրջանը բարենպաստ հող են նախապատրաստել նրանց զարգացման համար:

Նարեկացու և Բուսնի աշխարհայացքի, ստեղծագործական մտքի և պոետիկական պատկերների ձևավորման խնդրում հույժ կարևոր դեր ու նշանակություն ունեն նրանցից յուրաքանչյուրի դավանած կրոնն ու ընտրած հոգևոր ուղին, ուստի, ըստ անհրաժեշտության, հանգամանորեն ներկայացվել են քրիստոնեական միաստիցիզմի և իսլամական սուֆիզմի գաղափարախոսության դրույթները: Այնուհետև բերված օրինակների միջոցով ի ցույց են դրվել նրանց միաստիկական գաղափարների գեղարվեստական դրսևորումները: Այս կտրվածքով համեմատական քննության են ենթարկվել առկա ընդհանրություններն ու տարբերությունները:

Այնուհետև ներկայացվել են երկու գլուխգործոց երկերի՝ «Մատենանի» և «Մասնավի» ստեղծման փուլերն ու դրանցից յուրաքանչյուրի կառուցվածքը:

Առաջին գլխի ավարտին ներկայացվել են նաև լեզուն դարձած երկու հեղինակների մասին հյուսված ավանդազրույցներն ու պատումները, որոնք, անկասկած, երկու հանձարների կյանքի ուղեկիցներն են և արտահայտում են սեփական ժողովուրդների պաշտամունքային վերաբերմունքը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԱՐՄԻՆԸ ԵՎ ՀՈԳԻՆ ՈՐՊԵՍ ՄԻՍՏԻԿԱԿԱՆ ՄՏԱՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀՆՍԲ

Գրիգոր Նարեկացու և Ջալալ Էդրիմ Բուսնի ստեղծագործությունների համեմատությունն ակնհայտ են դարձնում այն ընդհանուր դրույթները, որոնց հիմքի վրա ձևավորվում է միաստիկական մտահայեցողություն երևույթը: Ակնհայտ են դառնում բազմաթիվ տիպաբանական և ծագումնաբանական ընդհանրություններ, որոնք գալիս են միջնադարյան մարդու մտածողական համակարգից և առաջին հերթին՝ Սուրբ գրքերից, ապա նաև կրոնական բազմաթիվ գաղափարախոսություններից, համամարդկային մտավոր ձեռքբերումներից և տարբեր փիլիսոփայական ուղղություններից:

1. Ինքնաճանաչման խնդիրը Նարեկացու և Բուսնի պոեզիայում

«Ինքնաճանաչումը» (خود شناسی), կրոնափիլիսոփայական հենք ունեցող խնդիր է, որն իր տեղն ու կարևորությունն է գտել ոչ միայն հայ և պարսիկ, այլև ընդհանրապես աշխարհի բոլոր խոշոր մտածողների ստեղծագործական համակարգերում: Դեռևս անտիկ փիլիսոփայությունից է գալիս «ճանաչիր ինքդ քեզ» կարգախոսը: Մահմեդական հավատքի ջատագովները ինքնաճանաչումը հավասարեցնում են Աստծուն ճանաչելու հետ: Դուրանի բառերով ասած՝ «مَنْ عَرَفَ نَفْسَهُ فَقَدْ عَرَفَ رَبَّهُ» (Նա ով ճանաչեց ինքն իրեն, կճանաչի նաև իր Աստծուն): Փաստորեն, «ինքնաճանաչումը» Աստծո և աշխարհի ճանաչման ճշմարիտ բանալին է համարվում: Մուհամմադ մարգարեի խոսքերը, բեկվելով միաստիկ գրողի՝ Բուսնի բանաստեղծական և կրոնափիլիսոփայական հայացքներին, կրկին հաստատում են ասվածը:

بهر آن پیغمبر این را شرح ساخت هر که خود را شناخت، یزدان را شناخت⁴

Մարգարեն այս խոսքերն ստեղծեց այն բանի համար, որ [հայտնի լինի] Ով ինքն իրեն ճանաչի, կճանաչի նաև իր Տիրոջը:

Նույն իմաստն է պարունակում Բուսնի հետևյալ քառյակը՝

ای نسخه نامه الهی که تویی وی آینه جمال شاهی که تویی

بیرون ز تو نیست هر چه در عالم هست در خود بطلب هر آنچه خواهی که تویی⁵

Ով աստվածային պատկերի կրկնօրինակ,

⁴Բուսնի, Մասնավի Մանավի, Թեհրան, 1371 (հայկ. թվ. 1992), հիմնգրող գիրք, 2114:

⁵Ջալալ Էդրիմ Բուսնի, Քուլիյաթ Դիվանե Շամս, (Շամսի Դիվանը), Թեհրան, 1373 (հայկ. թվ. 1994), 1921-րդ քառյակ:

Եվ ո՛վ արքայական փառքի հայելի,
Քեզնից դուրս չէ այն՝ ինչ կա տիեզերքում,
Քո մեջ փնտրիր այն՝ ինչ որ ցանկանում ես: Դա ինքը ես:

Գրիգոր Նարեկացուն ևս հուզող հարցերից է եղել մարդու ծագման և ինքնաճանաչման առեղծվածային խնդիրը: «Մատեանում» կարդում ենք հետևյալը.

Որ ոչ իսկ ծանեայ զիս երբեք զիտել,
Թէ յո՞վ և յո՞ր պատկերել վասն ո՞ր զոյացայ⁶:

Միստիցիզմի պարագայում «ինքնաճանաչումը» միշտ չէ, որ պետք է հասկանալ որպես ռացիոնալ երևույթ: Օրինակ՝ սուֆիզմում «ռաբիտա» կոչվող տեխնիկական ձևը մշակված էր այն նպատակով, որպեսզի շեյխը կենտրոնացման միջոցով (توجه) Աստվածային էներգիան փոխանցի իր աշակերտ սուֆիին: Աշակերտ-ուսուցիչ այդ տեխնիկան դառնում էր մի միջոց, որպեսզի աղետատու իր անհատականության մեջ խորանա և ավելի ու ավելի էներգիա ներառի⁷: Համաձայն սուֆիական ուսմունքի՝ «մարդու կատարելագործման ու ինքնամաքրման տանող հիմնական ուղիները երեքն են՝ ճգնակեցությունը, իմաստությունն ու միասնությունը⁸», ըստ որի մարդու ճանաչողության ու իմաստության գլխավոր տարրը սեփական ես-ի բացահայտումն ու լիակատար ճանաչումն է: Դա այն հիմնականն է, որի միջոցով մարդը պիտի կարողանա ճանաչել նաև Բարձրային ու դեպի Նա տանող փրկության ուղիները:

Ինքնաճանաչման երևույթը ծնում է բազմաթիվ այլ հարցեր և առաջադրում նորանոր խնդիրներ, քանի որ դրանից հետո միայն հնարավոր պիտի դառնա ճանաչել նաև բովանդակ աշխարհը: Երևույթ, որը բնորոշ է ոչ միայն հայ կամ պարսիկ մտածողությանը, այլև առհասարակ ողջ մարդկությանը:

2. Մարդու երկվության թեմայի դրսևորումները Նարեկացու և Ռումիի պոեզիայում

Ինքնաճանաչման ձգտումն ու ջանքերը միստիկի հոգում ծնում են նոր զգացումներ ու նրան կանգնեցնում բարդ երկընտրանքի առջև: Այս կտրվածքով ամենահատկանշականը մարդու էության մեջ երկվության կամ «ամբիվալենտության» երևույթի առկայությունն է հոգու և մարմնի, ինչպես նաև անբաժանելի զգացումների՝ դրականի ու բացասականի միջև:

Մեր կողմից ուսումնասիրվող երկու միստիկ բանաստեղծներին ևս հատուկ է մարդու երկբևեռվածության կամ ամբիվալենտության խնդիրը բոլոր մակարդակներում, սկսած մարմնի և հոգու փոխհարաբերությունից մինչև մարդկային ամենասովորական կողմերի դրսևորումը, որը երկու դեպքերում էլ լավագույնս արտացոլված է նրանց կողմից: Մի դեպքում, Նարեկացու «Մատեանում» ակնհայտ հոգեբանական և գեղարվեստական հնարքներից են առատորեն սփռված երկվության բացահայտ դրսևորումներն ու արտահայտությունները.

Ըմպանակք երկու յերկոսին ձեռին,
Մինն արեամբ, և միւսն՝ կաթամբ,
Երկու բուրանոցք կայծակնաւորք,
Մինն խնկով, և միւսն՝ ճենճերիւ,
Սկաւառակք կրկին կրաւորականք համոց,
Մինն՝ քաղցու, և միւսն՝ դառնութեամբ,
Բաժակք զոյգ առ երկուս բերմունս,
Մինն արտաւսր, և միւսն՝ ծծումբ...:

(Բան L-9, էջ 365)

Մյուս դեպքում՝ նույնպես: Ասես Ռումին, շարունակելով Նարեկացու միտքը, կամ կրկնելով նրան, հաստատում է.

گاه ماهی باشد او و گاه، شست
نیم او حرص اوری، نیمش صبر
نیمه دیگر سپید همچون ماه
هر که آن نیمه ببیند رد کند

(Մասնավի, երկրորդ գիրք, 604-608)

Քանի որ մի անձի մեջ երկու սկիզբն էլ կա, [Նա] մերթ ծուկ է դառնում, մերթ հողային: Նրա կեսը հավատացյալ է, կեսը՝ հեթանոս Կեսը՝ ազահություն, կեսը՝ համբերություն: Կովի նման, ձախ կողմն ամբողջությամբ սև է, Իսկ մյուս կողմը՝ լուսնի նման սպիտակ: Ով այս կողմը տեսնի, կվանի [այս], Ով մյուս կողմը տեսնի, կվանի [այն]:

Այս և նման տողերը ակնարկում են հողածին մարդու երկու հիմնական անառարկելի՝ և՛ քայքայվող ու ոչնչացող, և՛ փրկության արժանացող կողմերի առկայությունը: Եվ Ռումին, և՛ Նարեկացին տեսնում են մարդուն իր աշխարհիկ ցանկությունների և կատարելագործման ջանքերի «ներհակության» մեջ: Այդ երկու զգացումների մեջ էլ ձևավորվում է «մարդու» կերպարը Նարեկացու և Ռումիի պոեզիայում:

⁶ Նարեկացի Գր., Մատեան ողբերգութեան, Աշխատասիրութեամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Ե., 1983, Բան ԽՅԶ-Ա, էջ 423:

⁷ Sten Buehler Arthur, Sufi heirs of the prophet, The Indian naghbondiyya and the Rise of the mediating Sufi sheyk, Colombia, 1998, 5nd chapter.

⁸ Միասնությունը կամ "وحدت الوجود", սուֆիզմի հիմնական տարրերից մեկն է, որն սկիզբ է առնում հնդկական pantajali փիլիսոփայությունից: Այն մի շարք այլ երկրների փիլիսոփայության մեջ հանդես է գալիս որպես pantheism, որը բառացի նշանակում է՝ «Աստված ամեն բանի մեջ է», իսկ մեկնաբանվում է այսպես. «Աստված է տիեզերքի հոգին, և տիեզերքը՝ Աստծու մարմնացումն է»: Սուֆիզմում գտած նրա մեկնությունը հետևյալն է. ջրի գույնը ափսեի գույնն է, որի մեջ է այն: Աբդ-օլ-Ռահման Ջամին՝ պարսիկ անվանի սուֆի բանաստեղծն այս կապակցությամբ ընդգծում է. «Չնայած մարդն իր պագշտու ու կենդանական մարմնի պատճառով մեղքերի մեջ է ընկղմված, սակայն իր հոգու շնորհիվ կատարյալ լույսով է ողողված: Եթե որևէ կողմ շրջվի և որևէ բան ուշադրության արժանացնի՝ նրա գույնն էլ կստանա»: Հետաքրքրական են նաև այս մասին գրած նրա չափածո տողերը՝

کافتاد بر آن پرتو خورشید وجود
خورشید در آن شیشه همان رنگ نمود

اعیان همه شیشه های گوناگون بود
هر شیشه که بد سرخ و یا زرد و کبود

Բոլոր երևույթները գունավոր ապակիների պես են, որոնց մեջ արտացոլվում են արևի ճառագայթները: Յուրաքանչյուր ապակի, որ կարմիր է, դեղին կամ կապույտ՝ Արեգակն էլ նրանում նույն գույնն է արտացոլում:

3. Խոստովանություն և ինքնամաքրում

Գրիգոր Նարեկացու և Ջալալ Էդրիմ Ռումիի գաղափարների ու ստեղծած պատկերային համակարգերի կենտրոնում ընկած է կատարելության ու փրկության ձգտող «մեղավոր» մարդը: Մարդ, որն ինքնաճանաչման միջոցով փորձում է գիտակցել մարմնի և հոգու գործած մեղքերն ու ձգտում մաքրվել ու ձերբազատվել դրանցից:

Մարդն արդեն ի սկզբանե ծնվում է նախամարդու մեղքի կնիքը ճակատին: Իսկ ապաշխարանքը դեպի Տերը դառնալու առաջին քայլն է, որը նրա ճամփան ուղղորդում է դեպի հոգու մաքրագործում և ի վերջո՝ փրկություն: Սա, ըստ էության, համամարդկային բնույթ կրող մի երևույթ է՝ յուրահատուկ մարդկային էությանը, քանի որ նա ոչ միայն ի ծնե կրում է նախամարդու մեղքը, այլև իր երկկողմ՝ հողեղեն մարմնի առկայությամբ անվերջ մեղանշում է: Սակայն քանի որ Արարիչը մարդու մեջ միևնույն ժամանակ ստեղծել է նաև հրեշտակային ու աստվածատենչ ոգին, ուստի մեղքերի մեջ թաթախվելուց հետո նրա մեղավոր հոգին ձգտում է մաքրագործման և ազատագրվելու երկրային չարիքներից, որի առաջին քայլը նրան մղում է խոստովանության ու ապաշխարանքի: Սուրբ գրքերում հաճախ է խոսվում ապաշխարության ու մեղքերը քավելու մասին, առաջարկվում են տարբեր միջոցներ: Ապաշխարության մասին կարդում ենք՝ «ասում են ձեզ, սակայն եթե չապաշխարեք, ամենքդ էլ նոյնպես պիտի կորչեք»⁹: Երկու հեղինակներն էլ մեղավոր մարդու փրկության առաջին քայլը համարում են մեղքի գիտակցումն ու դրա ճանաչումը, որին հաջորդում է խոստովանանքն ու զանազան միջոցներով այն քավելու գործընթացը: Թերևս աշխարհի բոլոր միստիկներին հատուկ ճգնակեցությամբ ու ծոմապահությամբ, նաև մարմնական զանազան զրկանքների ու տանջանքների միջոցով պատյանի (մարմին) քայքայումը հանուն լույսի (հոգի) ճառագման, հենց մեղքի գիտակցության ու դարձի գալու տրամաբանական հետևանքն է իրականում:

گر سپاه کردی تو نامه عمر خويش / توبه کن آنها که کردستی تو پیش
عمر اگر بگشتت، بیخش این دم است / آب توبه اش ده، اگر او بی نم است
بیخ عمرت را بده آب حیات / تا درخت عمر گردد بانبات

(Մասնավի, երկրորդ գիրք, 2221-2223)

Եթե արդեն սևացրել ես կյանքիդ էջերը,
խոստովանի՛ր մինչ օրս գործած մեղքերիդ համար:
Եթե կյանքն անցել է, ոչինչ, ներկա պահն է կարևոր,
խոստովանությամբ խոնավացրու (ողբա) եթե այն չոր է:
Կենաց ծառը ջրի՛ր ապաշխարության ջրով (արտասուքով),
Որպեսզի այն բերքառատ ու կենսատու դառնա:

Նարեկացի.

Այլ արդ, քանզի որպես ոչ է առանց Քրիստոսի աստուծոյ ոգւոց
փրկութիւն,
Եւ ոչ առանց տեսման աչաց՝ առ լոյս զուարճութիւն,

⁹ Դուկ. 13. 5:

Եւ կան առանց արուսեկին նշուլից՝ արեւու երբեք քաղցրութիւն,
Այսպէս եւ ոչ առանց խոստովանութեան ծածկութից
Եւ ստգտանաց անձին՝ քաւութիւն:

(Բան Ծ-ա, էջ 442)

Այստեղ տեղի է ունենում մեղավոր մարդու հոգեբանական պայքարը ինքն՝ իր հետ. սակայն կարծես թե մարդ ինչքան ձգտում է հեռանալ մեղքերից ու մոտենալ Բարձրյալին, այնքան ավելի հեռու ու հեռու է թվում Տերը, այնքան առավել անհնարին՝ նրա տեսությանն արժանանալը: Ինչքան խորանում է այս տարածությունը, այնքան զորանում և ուժգնանում է նաև նրան տեսնելու տենչն ու ներքին հույզը: Յենց այդ հույզն է, որ միստիկին նախապատրաստում է տրանսի՝ հոգեպայծառության (Ֆանա) պահի վայելքին: Այն անտեսանելի, բայց մշտնջենական իրոճն ու սերը սուֆիի կատարելագործման ճանապարհի առաջին աստիճանն է, որի հետևանքով ծնվում, աճում և զնալով հետզհետե ավելի ու ավելի են խորանում միստիկի հոգու տվյալանքներն ու Բարձրյալին տենչալու հոգեվիճակը: Ահա թե ի՛նչ են քարոզում սուֆիները՝ բռնել ճգնակեցության ուղին, ապաշխարել և ինքնամաքրագործման միջոցով ազատագրել հոգին.

در ریاضت، آیده بی رنگ شو / همجو آهن ز آهنی بی رنگ شو
تا ببینی ذات پاک صاف خود / خویش را صافی کن از اوصاف خود
بسی کتاب و بی معید و اوستا / بیی اندر دل، علوم انبیا

(Մասնավի, առաջին գիրք, 3459-3461)

Երկաթի պես գունաթափվի՛ր մաքրվի՛ր երկաթի գույնից,
ճգնակեցության մեջ, անգույն ու պարզ հայելի դարձի՛ր:
Բոլոր որակներից քեզ այնպես մաքրի՛ր,
Որպեսզի տեսնես ճշմարիտ էությունը:
Սրտիդ մեջ կտեսնես, մարգարեների գիտությունները՝
Առանց որևէ գրքի, ուսուցչի և առաջնորդի:

Ռումիի և Նարեկացու համար ապաշխարությունն ու խոստովանությունը վերածնունդ են, լավագույն միջոց կենաց ծառը կրկին բերքառատ դարձնելու համար: Այստեղ կարևորագույն դերը պատկանում է արտասովախառն խոստովանությանը. «արցունքների հետ երևան է գալիս մի գործընթաց, որ թույլ է տալիս զգայական շերտերից անցնել բանականին, աչքի լույսից հասնել հոգու լույսին, զղջանքից՝ էքստազի վիճակին...»¹⁰:

Նարեկացին այդ բազում ու անծայրածիր հանցանքների մեջ, ձեռքերը դեպի երկինք պարզած, հավատացյալի հույսով «ի խորոց սրտի» աղոթքն է ուղղում երկնքի ու երկրի Տիրակալին, հենց այնտեղ էլ որոնում փրկության միակ ուղին: Թվում է, թե նրանք երկուսն էլ երկրի վրա ապրող, սակայն ընդմիշտ դեպի երկինք, դեպի բարձրյալի կատարելությունը տանող ուղիներով են խոյանում, այնտեղ միայն փնտրում ինքնամաքրման ու փրկության նշույլները:

¹⁰ՄահեԱճնի և Ժան-Պիեռ, Գրիգոր Նարեկացին և իր «Մառյան ողբերգության» երկը, Ե., 2004, էջ 101:

4. Գոգու վերադարձը սկզբնաղբյուրին և Սիրո Ֆենոմենը

Դեպի Աստված կամ, այլ կերպ ասած, դեպի «սկզբնաղբյուրը» վերադառնալու գաղափարը բազմիցս արտացոլվել է և՛ Ղուրանում, և՛ Աստվածաշնչում, և՛ մի շարք փիլիսոփայական տեսություններում ու գաղափարախոսություններում: Հաճախ արտահեղման գաղափարը փիլիսոփայության մեջ համեմատվում է Արեգակի հետ. արևն իր լույսը հավասարապես տարածում է, սակայն այն երբեք չի պակասում: Խնդիրը կարելի է դիտարկել երկու՝ մարմնի և հոգու տեսանկյուններից: Մարդկային մարմինը հողածին է, ու քանի որ այն ստեղծվել է հողից, ապա ի վերջո հողին է վերադառնում՝ իրեն շունչ պարզևած սկզբին: Սակայն այստեղ խոսքը ոչ միայն մարմնի վերադարձի մասին է, այլև՝ հոգու: Սուֆիական աշխարհընկալման համաձայն կատարելության ձգտող հոգին անվերջ տառապում է այս անցողիկ աշխարհում՝ ապրելով անկատար ու մեղավոր մարմնի մեջ, ուստի անընդհատ ձգտում է կատարելության հասնել ու միաձուլվել իր սկզբնաղբյուրին: Բնականաբար, սկզբնաղբյուրը Աստվածն է, որը ստեղծել է աշխարհը: Հենց դրան են նվիրված հոգեվարժանքները, որոնցով զբաղվում են միստիկները՝ մերժելով մարմինն ու հեռանալով աշխարհայինից: Նրանց հոգիները տենչում են մերժենալ ու միաձուլվել այն կատարյալ հոգուն, որտեղից գոյացել են իրենք:

از همـانجا كـامد آنجا می رود

آنچه از دریا بدریا می رود

(Մասնավի, առաջին գիրք, 767)

Այն, ինչ մի ծովից՝ մյուսն է գնում, Այնտեղ է վերադառնում, որտեղից որ եկել է:

Այլ է պատկերը Նարեկացու «Մատենում»: Այստեղ, ի տարբերություն Ռումիի, քողարկված ու խորհրդավոր են պատկերները, ու թվում է, թե չկա և ոչ մի որոշակի արտահայտություն մարդու ստեղծման աղբյուրի ու հոգու արմատների մասին, սակայն խորաթափանց հայացքը կարող է նկատել բառեր, որոնց շղարշի ներքո արտացոլված է մուսուլման փիլիսոփայական գաղափարը.

Հրամայեա՛, գթած, խնամակալ, գովեալ,
Լոյս անշիջանելի, զաւրութեամբ անսահմանելեալ,
Զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս
Մարմնեղէն յարկի անդամոցս:
Յորում հանգուցեալ անլքանելի՝ բնակեսցես բազմեալ՝
Վխորժ տենչանալք, միութեամբ հոգուս իմ ընդ քեզ,
Զապականութիւն մեղացս մերժեալ իսպառ՝
Յանարատութիւն զիս պատրաստեսցես,
Ամենակեցոյց թագաւոր անմահ, տըր Յիսուս Քրիստոս,
Արհնեալ յաւիտեանս:

(Բան 3Ը-դ, էջ 564)

Այն ամենը, ինչ փիլիսոփայության մեջ ներկայացվում է որպես «հոգու թռիչք», «հոգու ճանապարհորդություն», «հոգու վերածնունդ» կամ «հոգու վերադարձ», սուֆիական ուսմունքի մեջ հանդես է գալիս որպես «բոլոր տեսակի կապերից ու կապվածություններից ձերբազատվելու» Ֆենոմեն: Այդ ֆենոմենը իսլամական սուֆիզմում նկարագրվում է զանազան օրինակներով,

որով, որոնցից ամենաուշագրավը ցայգաթիթեռի ու մոմի մողելն է. մինչև այն պահը, երբ ցայգաթիթեռը թռչում է մոմի շուրջը, զմայլվում է նրա գեղեցկությամբ ու լույսով, սակայն երբ հավում է նրան, այլևս անէանում է, մնում են միայն կրակն ու լույսը: Ահա թե որն է կատարյալ մերժեցումը: Ամբողջ խնդիրը գիտակցության բացառման և սրտի ու զգացմունքի թելադրանքով շարժվելու մեջ է: Եթե ցայգաթիթեռը գիտակցի իր՝ մոմի կրակուն ալրվելը, նա երբեք չի ձգտի մերժենալ նրան, սակայն նա իր միստիկ ձգտումների մեջ անէանում ու հրաժարվում է սեփական ես-ից: Այստեղ հատկանշական է նաև այն, որ Աստծուն միանալու միստիկական գաղափարը հաճախ իրականացվում է հոգևոր վարժանքների՝ աղոթքների, նշանակալից բառերի ու արտահայտությունների կրկնությամբ ու խիստ կենտրոնացումների միջոցով, որոնց մեջ հույժ կարևոր է աղոթքի դերը, քանի որ «աղոթքի ընթացքում ներհյուսվում են էքստատիկ աստվածաբանության բոլոր աստիճանները, և էքստազը կայանում է զերագույն էության անըմբռնելի ընկալմամբ՝ հիացման, զարմանքի, հափշտակության վիճակում» (Արեուպագացու էքստազի մասին է)¹¹:

Սուֆիներն իրենց հոգեվարժանքի և, մասնավորապես, կենտրոնացման առաջին փորձերն ստանում էին Ղուրանի հատվածների կրկնողությամբ¹²: Հմարք, որը կարելի է տեսնել և՛ Նարեկացու և՛ Ռումիի պոեզիայում, և սրանց ի ցույց դնելը առանձնապես մեծ ջանքեր չի պահանջում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՒՐԲՈՐԱՅԻՆ ԽՈՍԹԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵՆՈՒՄ» ԵՎ ԶԱԼԱԼ ԷՂՂԻՆ ՌՈՒՄԻԻ «ՄԱՍՆԱԿՈՒՄ»

Սաղմոսյան և Ղուրանյան ազդեցություններ

Միստիկ երկու բանաստեղծների ստեղծագործությունները լուսաբանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց կրած ուղղակի և անուղղակի ազդեցությունը իրենց դավանած Սուրբ գրքերից: Մի դեպքում՝ Աստվածաշնչի ու Սաղմոսների անթարադարձն ու արտացոլումը Նարեկացու «Մատենում», իսկ մյուս դեպքում՝ Ղուրանի խոսքն ու նրա ոգին Ռումիի «Մասնավիում»: Ուսումնասիրությունն իրականացվել է չորս պայմանական ենթախմբերով.

1. Կառուցվածքային ազդեցություններ և մեմանակումներ

¹¹ Թամրայան Հր. Հ., Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, Ե., 2004, էջ 188:

¹² Ղուրան կարդալը և այն լսելը (սամա) հոգեվարժության ամենատարածված ձևերից մեկն էր: Եեյխերի վկայությամբ՝ մի գիշերվա ընթացքում 70 հազար անգամ կրկնում էին Ղուրանի «Թահլիլ» կոչվող աղոթք-բանաձևը. լա-իլախա-իլ լա-լլախ... (2կա Աստված բացի Ալլահից...ևն): Տես Պարսից պոեզիայի ընտրանի, Ս. Կապուտիկյանի թարգմանությամբ, տողացի թարգմանեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Ա. Կոզմոյանը, Ե., 2004, էջ 25:

Ե՛վ Նարեկացին, և՛ Ռումին կատարելապես տիրապետել են իրենց դավանած Սուրբ գրքերի արտացոլման արվեստին և ունենալով կրոնական և ժամրային նախօրինակը՝ գիտակցորեն թե ենթագիտակցորեն նմանակել դրանց: Երկու գլուխգործոց ստեղծագործությունների պարագայում էլ նկատվում են ոչ միայն մտքերի ու խոհերի, այլև գեղարվեստական մտածողության, ինչպես նաև կիրառած արտահայտչաձևերի առնչություններ ու ազդեցություններ: «Բացառված չէ, որ Նարեկացին աչքի առաջ իբրև օրինակ ունեցել է սաղմոս-բանաստեղծությունները, որոնք երգվել են, և ինքն էլ ձգտել է ստեղծել այդպիսին»¹³: Այսպես, ահա, առավել ցայտուն են Նարեկացու «Մատեանի» և սաղմոսների կառուցվածքային ու ձևային նմանությունները, մասնավորապես Աստծո հետ երկխոսության և նրան հաղորդակցվելու ներշնչման պահերին: Խոսքեր, որոնք ներկայանում են աղոթքի, մեղքերի քավության և փրկության աղաչանքների տեսքով: Ռումիի «Մասնավիում» նույնպես դժվար չէ նկատել Ղուրանի հետ ունեցած կառուցվածքային ակնառու ընդհանրություններ: Այս առանձնահատկության շնորհիվ մի շարք գրականագետներ՝ համծին Ա. Շիմելի «Մասնավիում» համարել են Ղուրանի անգերազանցելի մեկնաբանություններից մեկը, որն սկզբից մինչև վերջ շաղախված է դուրանյան այաթներով ու արտահայտություններով և խորապես արտացոլում է դուրանյան կառուցվածքային-իմաստային յուրահատկությունները:

2. Սուրբգրային խոսքի ուղղակի մեջբերումներ և պատկերային համապարզի ազդեցություններ՝ ակնարկների տեսքով

Նարեկացու «Մատեանում», ինչպես նաև Ռումիի «Մասնավիում» ակնհայտ են տողեր, որոնցում ուղղակիորեն մեջ են բերվել մի դեպքում աստվածաշնչյան խոսքերն ու սաղմոսները, մյուս դեպքում՝ Ղուրանի այաթները կամ հադիսները:

Նարեկացու «Մատեանում» կարդում ենք.

Քանզի գիհ՞րդ արդեք գշուք երջանկին

Ինձ՝ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասել ընդ նմին,

Թե՛ Ոչ մերձեցաւ առ իս թիրեալն սրտիւ: (Բան 4Ա-ա, էջ 486)

Վերջին տողում նշված «Ոչ մերձեցաւ առ իս թիրեալն սրտիւ» արտահայտությունը ուղղակիորեն մեջ է բերվել Դավթի սաղմոսների գրքից, որտեղ նշված է. «Ծուռ սիրտ ունեցողն ինձ չմոտեցավ, անգզամն ինձնից խոտորվեց, բայց ես հոգ չարեցի»¹⁴:

Նման հնարք կարելի է նկատել նաև Ռումիի «Մասնավիում».

باز شد که انا إليه راجعون¹⁵

مصطفى فرمود: دنيا ساعتیست

(Մասնավի, առաջին գիրք, 1140-1142)

Ձևը անձևությունից դուրս եկավ,

صورت از بی صورتی آمد برون

پس تورا هر لحظه مرگ و رجعتیست

¹³ Քալանթարյան Ժ., Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգության» պոեմի և սաղմոսների առնչությունները, Ս. Էջմիածին 1997, էջ 17:

¹⁴ Սաղմոս, 100.4:

¹⁵ Ղուրան, 20, 156:

Բացահայտվեց այն, որ «դեպի Նա ենք վերադառնալու»

Ուրեմն քեզ ամեն վայրկյան մահն ու վերածնունդն են սպասում, Մարգարեն ասել է. «կյանքը մի ժամ է»:

Այս չորս տողերից յուրաքանչյուրը պարունակում է դուրանյան նույնիմաստ արտահայտություն: Առաջին նախադասությունը՝ «ամձև աշխարհի ձևավորվելը», անկասկած, հուշում է աշխարհի արարումը, քանի որ, համաձայն Աստվածաշնչի խոսքի և Ղուրանի, «Աստված աշխարհը ստեղծեց ոչնչից»: Արտահայտություն, որը կարծես մերժեցնում է և Աստվածաշունչն ու Ղուրանը: Իսկ "إنا إليه راجعون" (դեպի Նա ենք վերադառնալու) արտահայտությունը «դեպի Աստված վերադառնալու» գաղափարն է, որը բառացիորեն մեջ է բերվել Ղուրանի «Ալ-Բադարա» սուրայի 156-րդ այաթից: Սա և նրան հաջորդող տողը խոսում են մարդու «վերածննդի» մասին, որ մարդն անվերջ ձգտում է վերադառնալ ու միանալ իրեն կյանք ու գոյություն պարզևած սկզբին: Քառատողի վերջում, որպես տրամաբանական ավարտ, հիշատակվում են Մուհամմադ մարգարեի խոսքերը՝ «կյանքը մի ժամ է լոկ»: Նշենք նաև այն, որ Ռումին մեջ է բերել մարգարեի հայտնի հադիսի ընդամենը մի մասը, որի ամբողջական տեսքը հետևյալն է. "الدنيا ساعة فاجعلها طاعة", ասել է թե՛ հովտային այս կյանքը մի ժամ է լոկ, ուրեմն շտապիր ապաշխարել:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ և՛ Նարեկացու, և՛ Ռումիի պոեզիայում Սուրբ Գրքերից մեջբերված համապատասխան արտահայտությունները վարպետորեն հանգավորվել ու համապատասխանեցվել են «Մատեանի» և «Մասնավիի» այլ տողերի ոճական ու բանաստեղծական կառույցին՝ մերվելով այնպես, ասես դրանք ոչ թե Աստվածաշնչի կամ Ղուրանի, այլ հենց իրենց՝ հեղինակների շարադրանքների արդյունքն են:

Նարեկացու «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստծու» արտահայտությունը, որով սկսվում է պոեմի ամեն մի գլուխը, աղոթք ու աղերս է: Ակնհայտ են և այն ոգեշունչ ու ջերմեռանդ խոսքերը, որոնք պետք է հասնեն Աստծուն, արձագանք գտնեն երկնային ոլորտներում: Պատկերավոր խոսքը Նարեկացու «Մատեանում» խոր արձատներ ունի: Գրականության պատմության, մասնավորապես հոգևոր գրականության մեջ այն կատարելատիպ է և միանգամայն ակնառու կերպով գալիս է Աստվածաշնչյան խոսքից՝ ակնարկի տեսքով.

Եւ յարդարեսցես զմեզ աւթեվանս պատուականս ամենայն պատրաստութեամբ՝

Ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ,

Առանց պատժոց պարտաւորութեան ընդունել

Ձայս անմահացուցիչ մանանյս կենաց նորոյ փրկութեան:

(Բան ԼԳ-է, էջ 383)

Նշված «կենաց մանանան անմահ այս նոր փրկության» արտահայտությունը Նոր կտակարանի «Յայտնութիւն Յովհաննու» 49-50-րդ տողերի արձագանքն է, որտեղ ասվում է. «Ձեր հայրերը անապատում մանանան կերան, սակայն մեռան: Այս է երկնքից իջած հացը, որպեսզի ով որ սրանից ուտի, չմեռնի»¹⁶: «Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝ կե-

¹⁶ Յովհ. 6.49-50:

նաց կանոնիդ *ասել Աղոնայի տեր, եւ զիրամայեալ պատուերդ ոչ առնել*» (Բան ԼԴ-Ժ, էջ 389): Այստեղ ևս, չնայած առաջին հայացքից թվում է, թե նշվածներից բոլորը հենց հեղինակի «սրտի խորքից բխած» արտահայտություններ են, սակայն Աստվածաշնչի հետ համեմատելիս անմիջապես նկատվում է կտակարանային բեման: Երրորդ տողում «*ասեմ «Աղոնայի Տեր, բայց չկատարեմ պատվիրանը քո»*» արտահայտությունը Նոր Կտակարանի Ղուկաս ավետարանիչի խոսքերն են, որտեղ նա, կրկնելով Տիրոջը, ասում է. «Ինչու՞ ինձ «Տեր, Տեր» եք կոչում, իսկ ինչ ասում եմ չեք անում»¹⁷: Իսկ բանաստեղծության վերջին տողերում նշված «Որ ինձն իսկ գիս՝ զոսկեղէն տախտակս խաւսուն, նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբը աստուծոյ, եղծի, որ եւ խորտակելն է իրաւացի, եւ ես տխրատեսակ մրով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ» (նույն տեղում) արտահայտությունը՝ ուղղակի անդրադարձն է Հին Կտակարանի թեմայի. «Երբ Աստված Սինա լեռան վրա ավարտեց իր խոսքը, Մովսեսին տվեց վկայության երկու տախտակները՝ Աստծու մատով գրված քարե տախտակները»¹⁸: Նշենք նաև այն, որ Ղուրանում նույնպես առկա է հիշյալ համոզիպումը, երևույթ, որը խոսում է Աստվածաշնչի և Ղուրանի նմանությունների մասին:

Ինչպես Աստվածաշունչն ու սաղմոսները, այնպես էլ Ղուրանն ու հադիսները ունեն իրենց հատուկ մեկնությունները՝ (exegetic), սակայն այդ ամենի քննությունն այսօր դուրս է մեր առջև դրված խնդրի սահմաններից:

Այսպիսով, «Մասնավիում» առաջին հայացքից ավելի ակնառու է աշխարհիկ ոգին, քանի որ այս ստեղծագործությունը կազմված է աշխարհիկ թեմաներով առանձին պատմություններից, որոնց խորքում ու ենթատեքստում առկա է նաև հոգևոր շերտը: Երբ հեղինակն իր խոսքը Աստծուն է ուղղում, Նրա հետ երկխոսության մեջ մտնում, աներկբայորեն մտնում է հոգևոր սահմանների մեջ: Շատ հաճախ էլ, ընդհանրացնելով ղուրանյան որևէ մի միտք, ներկայացնում է պատկերավորման սեփական սահմաններով, իր անձնական մտորումները փոխանցում ընթերցողին:

